



27. ԳՐԱԾԸ ԶԻ ԶՆՋՎԻ

(Յագըլըն փողովմազ)

Նաղիր շահը քանի տարվա թաքավոր էր, բայց ժառանգ չուներ, որ մեռնելուց հետո նստեր հիրա թախտին: Թաքավորը շատ մտածում էր, չէր հիմանում, թե ինչ ճար-իլլաջ անի: Օրերից մե օր թաքունահին էրեխով մնաց:

Ծահը հեռացավ, էտ օրվանից էլ կնգա հետ չէր քնում: Քչերվան մե վախտ, թաքավորն հիրա տեղաչորի մեջ քնած վախտն ասեց. «Կնիկս մնացեր ա էրեխով, տղա էլ բերի՝ տերն եմ, ախչիկ էլ բերի՝ տերն եմ: Բե մի 18-20 տարով հըլնեմ էթամ ման գամ, տենամ՝ ոնց ա արբում իմ հպատակ ժողովուրդը»: Կանչեց Իզմիր աննով վազրին, ասավ. «Իզմիր՝ վազիր, հեքուցվանից ես ինան դու պըտի էթանք մեր երգիրը ման գանք, գնա՛ տուն, թաղարո՛ւք տե, մե ձեռք հասարակ չո՛ր հաքի, արի ճանապարհ հընգնենք»:

Իզմիր վազիրը գնաց տուն, կնգան ասավ թաքավորի որոշումը:

Կնգա ճարն ինչ, ասավ. —Այ մարդ, դե որ թաքավորը հրամայում ա, դու ինչ կանաս անի:

Հեքսի օրը Նաղիր շահն ու Իզմիր վազիրը հաքուստները փոխին, ձիանք նստան, ուզում ին քաղաքից դուս գին, թաքունուն լուր տվին, թե՛ բա չես ասի՝ թաքավորը քեզի ըսենց հերեսի վրա թողած, ուզում ա 18-20 տարով քաղաքից հեռանա:

Թաքունահին մարթ հղրկեց, կանչել տվեց թաքավորին: Թաքավորն հըլը ներս չըմտած, կնիկն ասավ. «Էս հո՞ւր ես ընձի թողում ըսենց հերեսի վրա էթում, մը հըլը տենանք՝ մեր վերջը ինչ ա հըլնում՝ տղա՛ եմ բերում, ախչիկ եմ բերում»:

Թաքավորն ասավ. —Այ կնիկ, տղա էլ բերես՝ տերն եմ, ախչիկ էլ. իմ որոշումը որոշում ա, ես պըտի էթամ:

Կնիկը շատ ասավ, մարթը քիչ լսեց. թաքավոր մարթ էր, հիրա ասածի տեր. վեր կեցավ, նստավ ձին, առավ Իզմիր վազ-

րին ու աղոթորանը չըբացված՝ ճամփա հընգալ: Երկար-բարակ ճանապարհ կտրելուց հետո արևը մոտեմուտ էր, հասան մե գեղ:

Թաքավորն ասավ.— Իզմի՛ր վազիր, մենք հանդիպանք էս գեղին, արի տենամ՝ խելքդ ի՞նչ ա կղրըմ, մենք հարո՞ւստ մարթի կուչտ կոնախ հըլնենք, թե՞ քյասիր:

Իզմիր վազիրը պատասխանեց, ասավ.— Թաքավորն ապրած կենա, մենք ո՞նչ հարուստի կուչտը կոնախ կըհըլնենք, ո՞նչ էլ քյասիրի:

Թաքավորն ասավ.— Այ մարթ, էդ ի՞նչ ես ասըմ, բա դուս մնա՞նք:

Ասավ.— Ձէ՛, ընչենք դուս մնըմ, թաքավորն աբրած կենա, ձիանքի գլուխը բաց կըթողենք, հուր էլթան, մենք էլ հետներից կէթանք, ընդեղ կոնախ կըհըլնենք:

Ձիանքի գլուխը բաց թողին: Ձիանքը գաճցին, մե հայաթի մեջի կայնան: Տեհան էս հայաթի մեջ մե խարաբա տուն մե յանին, մե փլված գոմ՝ մեկէլ յանին: Վազիրը ձեն տվեց՝ տա՛նտեր, տա՛նտեր, տանտերը դուս էկավ, ասավ՝ համմե:

— Էս քչեր, — ասավ վազիրը, — քո կոնախն ենք:

Տանտերն համեցեք արավ, ասավ՝ իմ աչկի, իմ գլխի վրեն, ու հինքը գնաց տուն:

Թաքավորն ու վազիրը ձիանքից հիչան, մե խելաք ժամանակ ետո տանտերը դուս էկավ, կոնախներին ներս տարավ, ձիանքը կապեց, դարման լցեց հառեջները, էլի գնաց: Մեքյա մնաց, տանտերը նորից էկավ կոնախների կուչտը: Քյասիր մարթ էր, հին-մին խլիս ուներ, քցեց թախտին, համեցեք արավ, էլի գնաց ներս, հաց-մաց բերեց, սկսին ուտել:

Տանտերն սկսեց հարցուփորձ անել, թե՛ ի՞նչ մարթ եք, որդեղի՞ց եք գալըմ, հո՞ւր եք էլթըմ:

Թաքավորը վերցեց ասավ.— Ախպե՛ր ջան, մենք որ կանք, չովդար մարթ ենք, տավար ենք առնըմ-ծախըմ:

Տանտերն էլի հելավ սուսըփուս դուռը բացեց, գնաց ներս: Էլի խելի վախտ ետացավ: Ըստեղ մե կածկած հընգավ թաքավորի սիրտը:

Թաքավորն ասավ.— Վազի՛ր, մե գնա տե՛ս՝ էս ի՞նչ գաղտնիք ա, որ էս էլ էս մե փշու սհաթը էս մարթը քանի անքամ նեսը-դուս ա անըմ, ըստե մե բան կա: Գնա՛, ինչ որ կըտենաս, կըգաս ընձի մեկ-մեկ կըպաղմես:

Վազիրն ասավ՝ լա՛վ:

Հելավ, որ էթա էդ մարթի տունը: Մե մութ պուճախով հընց-նըմ էր, մեկ էլ ի՞նչ տենա՝ հեսա մե մարթ, դավթարները կոլթըղի տակին, կայներ ա քնջին: Վազիրն, էն ա ուզըմ էր հարցնի, թե՛

ո՞րն ա էս մարթի տան դուռը, հըլը բերանը չէր բացե, էս մարթն ասավ. «Հը՞, Իզմի'ր վազիր, խեր հըլնի, էդ հո՞ւր ես էթըմ»: Վազիրը զարմացավ, թե էս մարթը հիրան որդո՞ւց ա ճանանչըմ: Ասավ. «էթըմ եմ էս մարթի տունը, տենամ, թե էս ի՞նչ նաղլ ա, ընչի՞ յա էս մարթը էսքանն ել ու մուտ անըմ, ընչի մե տեղ չի սըլթըմ»:

— Իզմի'ր վազիր, էդ մարթը մե շատ քյասիր, աղքատ մարթ ա, կնիկը նոր ազադվավ, տղա բերեց: Հենց էս սհաթին Նաղիր շահի կնիկն էլ ազադվավ, մե աղջիկ բերեց: Ես էլ կայներ եմ ըստե մարդանց բախտն եմ որոշըմ: Ես հեսա գըրմ եմ էս իմ դավթարի մեջ, որ էս աղքատ մարթի տղեն պտի մենձանա, փսակվի քո թաքավորի ախչկա հետ:

Վազիրը հիրա լսածի վրեն զարմացավ, հետ դարցավ էկավ, նիսթ-նիսթ նստավ թաքավորի կուշտը:

Թաքավորն հարցրեց. — Հը, ի՞նչ կա, վազի'ր, ընչի՞ ես նիսթ:

Վազիրը՝ թե. — Թաքավո'ր, ինչ ասեմ, հալ-նաղլն ըսենց. գացիմ, որ տենամ՝ էդ մարթը հո՞ւր ա էթըմ, մեկ էլ տեհամ՝ հեսա մե մարթ դավթարները կոլթղի տակին, կայներ ա քնջին: Սայմիչ չարիմ, ուզըմ իմ հընցնիմ, մեկ էլ էդ մարթը ձեն տվեց՝ Իզմի'ր վազիր, Իզմի'ր վազիր: Ետ դառցավ ասիմ՝ ի՞նչ ա: Ասավ. «Գիդես ի՞նչ, Իզմի'ր վազիր, էդ տանտերը մե աղքատ մարթ ա, էս քչեր ընդա կնիկը ցավ էր քաշըմ, պառկավ մե տղա բերեց: Էդ տղեն որ մենձանա, — ասավ, — կամուսնանա քո թաքավորի ախչկա հետ»:

Ասավ ու անհայտացավ: Ես էլ ետ դարձա էկա, որ քեզ հայդենեմ:

— Է՛հ, Իզմի'ր վազիր, մեկ օր չըկա, որ պալատից դուս ենք էկե, արդեն խելքդ թոցրել ես: Ինչպես կարելի ա, որ չփլաղ մարթի տղեն մենձանա, թաքավորի ախչիկ առնի, էդ ըսկի լսած բա՞ն ա:

— Կառնի', թաքավո'ր:

— Ձի' առնի, վազի'ր:

— Կառնի':

— Ձի' առնի:

— Կառնի':

— Ձի' առնի:

Սկսին երկար-բարակ վիճաբանել: Էդ վախտ տանտերը ներս մտավ:

Թաքավորն ասավ. — Ախպե'ր, կարելի ա՞, քեզ մե բան հարցնեմ:

Տանտերն ասավ՝ ասա՛:

Նաղիր շահն ասավ. — Հիրիկունը, որ մենք էկանք քեզանից քնելու տեղ ուզինք, դու էտ վախտը հա գնըմ իր, հա գալըմ իր, մե չես ասի տենանք՝ հըլա ըտա պատճառն ի՞նչ էր:

—Սիրելի՛ կոնախներ,—ասեց տանտերը,—իմ կնիկը պատ-
ճառավոր էր, հերեկ ձեր գալու վախտը ցավը բռնեց: Ընդա ցավը
բռնելը՝ ձեր գալը: Ես էլ հա ելումուտ իմ անըմ, որ համ ձեզի կու-
լուղ անեմ, համ կնգաս: Աստված ձեր բանն հաջողի, կնիկս սաղ-
սալամավթ ազատվավ, բերածն էլ տղա յա:

Թաքավորը տեհավ, որ վազրի ասածը հաստատվավ,
ասավ.—Այ մարթ, արի ես քեզ մե բան ասեմ: Դու մե քյասիր, աղ-
քատ մարթ ես էրևըմ, էդ տղեն էլ քեզ համար նոր գլխացավանք
կըլնի, արի դու էդ տղին տո՛ւր ընձի:

—Անծանոթ ախպեր, էդ ասելու բան ա, որ դու ասեցիր, ես իմ
հարազատ զավակին ո՞նց տամ էլօղլու, լսողն ի՞նչ կասի:

Թաքավորն ասեց.—Հինգ հարուր մանեթ ոսկի փողով կնգատ
հետ ապահով կաբրես, տղեդ էլ իմ կշտին կաբրի. քյասիր, տարիք
առած մարթ ես, էլ ըստուց դեն ո՞նչ աշխատել կանաս, ո՞նչ տուն
պահել:

Հինգ հարուր մանեթի անունը որ լսավ, խեղճ մարթը մտքի
տակ հընգավ, դես տվեց, դեն տվեց, վերջն ասավ.—Բայց պտի
էթամ կնգաս հետ մասլահաթ անեմ:

Թաքավորն ասավ՝ գնա՛:

Տանտերն գնաց կնգան ասավ, թե՛ բա չես ասի, ա՛յ կնիկ, մեր
տունը շատ հարուստ կոնախներ են էկե: Ընդանցից մեկն ուզում ա,
որ մենք մեր էս նորածին էրեխին տանք հիրեն՝ հինգ հարիւր մանեթ
ոսկե փողով:

—Հինգ հարիւր մանեթ: Այ մարթ, դու քո աչքով տեսա՞ր ոս-
կիները:

—Տեսա, ա՛յ կնիկ, ոնց չըտեսա, շատ հարուստ մարթ ա էրևըմ,
ոսկիներն էլ իմ աչքի առաջ հանեց, համբրեց, լցեց ստողի վրեն:

—Այ մարթ, չի հելե, չի հելե, հիմանանք էդ էրեխեն էլ չեմ բերե,
բեր համաձայնվենք, հինգ հարուր մանեթով կապրենք մինչև մեր
գյանքի վերջը:

Տանտերն էկավ կոնախների կուշտը, ասեց, որ համաձայն են:

Մութն հընգավ, քնան, հառավոտ էն բաշտեն զարթնան, մե-
րը էրեխին ծիծ տվեց, ինչ-որ ջաթ-ջուլ ուներ, կապրտեց, էրեխին
կոնդաղեց, տվեց ընդոնցը:

Թաքավորն ու վազիրը ձիանքը հեծան, էրեխին առան, շարու-
նակեցին հիրանց ճամփեն:

Շատ գացին, թե քիչ, շատ ու քիչն էլ Աստված գիդի, հասան մե
մեշա տեղը, էդ մեշի ո՛չ ծերն էր էրևում, ո՛չ տուտը:

Ըստեղ թաքավորն ասավ.—Վազի՛ր, ձիանից հիչի՛, առ էս էրե-
խին տա՛ր մեշի մեջ, մե ծառի տակ դի՛, թո՛ղ արի:

Վազիրն հիջավ ձիանից, հրեխին վերցնեց, տարավ Թաքավորի հրամանը կատարեց: Կոնդախը դրեց մե ծառի տակ, ուզըմ էր հետ գնա, մտածեց. «Դու բեր էս հրեխի վրեն մե նչա՛ն արա»: Կալամթրաշ դանակը ջերից հանեց, հրեխի աջ հանգջի ծերից Թոցրեց, էկավ ետ:

Թաքավորը, որ տեհավ վազրին, կնամիշ հելավ.— չը, վազի՛ր, տղեն Թաքավորի ախչկան առա՞վ:

— Կառնի՛, Թաքավոր՛, կառնի, ըսկի մի՛ վոազի:

— Լա՛վ, Թող առնի, որ ասըմ ես, ասըմ:

Ըսենց դիլաժաժ հընելով Թո սրանք շարունակեն հիրանց ճամփեն, մենք խաբարը տանք հրեխուց:

Կոնդաղած հրեխեն մնաց եքյա անահուն մեշի մեջ:

Մութն հընգավ, բայց Ասսանից էր, հրեխին ոչ մե բան չըպատահավ: Հեքսի օրը մե չոբան, ռիչարի սուրուն հառեջը քցած, էկավ էդ կողմերը: Նեյրի սև էժը ռիչարին քցեց հետևը, քաչեց էկավ էն տեղը, որտեղ հրեխեն էր: Նեյրին հրեխին տենալու բաշտան մըկմըկալով վազավ ընդա յանը, ոտերը ճողեց, պտուկը դրեց հրեխի բերանը: Հրեխեն կաթը ծծեց, էժը ոտերը փոխեց, էն պտուկն էլ ծծեց, Թողեց գնաց, խառնվավ սուրույին:

Հիրիկունը չոբանը սուրուն բերեց գեղամեջ, բաժանեց: Դու մի ասա, էդ էժը մե աղքատ ու նաչար պառավ կնգա էր: Պառավը փետե կոտն առավ, էկավ, որ էժը կթի, ձեռը տարավ կուրծը, տեհավ՝ ի՞նչ, էժի կրծին կաթ չըկա:

Պառավը քչեց գնաց չոբանի վրեն կոխ: Չոբանն ինչի՞ց էր խաբար: Խեղճը երթում կերավ՝ վալլա՛, բիլլա՛, խաբար չեմ, պառավը չըհավատաց: Է՛, հավատա, չըհավատա, խեղճ չոբանն ընչի՞ց էր խաբար. Թե ես խաբար եմ, չոբանն էլ խաբար էր:

Պառավն ասավ.— Լա՛վ, Թո հառավոտը լուսանա, ես իմ դիվանն իմ ձեռով կանեմ:

Քչերը պառավի քունը չըտարավ՝ դե՛ս չըճվավ, դեն չըճվավ, վերջը ճար-իլլաժ չեկավ. չըքնավ:

Հառավոտը շուտ պառավը էժն արավ հառաջը, էս իմ փետի պես էլ մե փետ վերցեց ձեռը, էժը քչեց դբա սուրուն: Տարավ, էժը խառնեց սուրույին, հինքն էլ գոխտուկ հընգավ չոբանի քամակից, գնաց: Դես-դեն արածացընելուց հետո չոբանը սուրուն քչեց դբա մեշեն: Մեկ էլ ինչ տենա, որ հեսա մե էժ ջոկնվավ սուրուից, մտավ մեշի մեջ: Պառավն հիրան տփեց մեշեն, գնաց կայնավ էժի գլխին, վարավուրդ արավ, որ ծառի տակ մե բան ա քթքթըմ, հառաչացավ, ի՞նչ տենա՝ կոնդախի մեջ մե հատ հրեխա: էժը մեքա դես-դեն արավ, էկավ հրեխու կոնդախի կուշտը, պտուկը դրեց հրեխի բե-

րանը, էրեխեն ծծեց պրծավ, հետո էլ էն մեկէլ պտուկը դրեց: Նոր ըստեղ պառավը հիմացավ ինչը ընչից ա, որ հինքը նհախ տեղն ա չորանի մեղքի մեջ մտե:

Էծը էրեխան ծիծ տալուց հետո գնաց խառնվավ սուրույին:

Պառավը էրեխին վերցեց, ուրախացավ, փառք տվեց Աստծուն, ասավ.— Փառքդ շատ հըլնի, Տե՛ր Աստված, մինչև հիմի մենակ իմ՝ տան քնջին կուճարած, ըստուց դեն մենակ չեմ հըլնի, էծի մե պտուկը ես կըծծեմ, մեկն էլ կըտամ ստան:

Պառավը էրեխին բերեց տուն, պահեց, արավ հիրանով:

Էրեխեն հեքյաթի մջի էրեխա էր. շուտ մենձացավ դարցավ օխտ-ութ տարեկան, էթըմ էր հարեանի էրեխեքի հետ հիրան համար ճան էր խաղըմ:

Թող սա ըսենց մենձանա, հիրա հընգերների հետ խաղա, մենք սախըրը տանք Նաղիր շահից և Իզմիր վազիրը:

Աչխարհեաչխարհ ման գալուց հետո օրերից մե օր սրանք էկան էն գեղը, որդեղ պառավն էր աբըրըմ: Մե քուչով հընցնըմ ին, տեհան, որ հեսա մե բոլուք էրեխա նստած, ճան են խաղըմ: Մոտեցան, թամաչ արին, տեհան, որ մե ութ տարեկան էրեխա տասներկու ջանի մեջ սաղի ճաները տարավ: Թաքավորն ու վազիրը մաթալ մնացին, տեհան, որ էդ տղեն հիրա տարած ճաները հետ տվեց տերերին: Վազիրը վարավուրդ արավ, որ էդ տղի աջ անգջի ծերը կդրած ա, մատը կծեց, ասավ՝ հըքմ.....

Թաքավորն ասավ.— Հը, վազի՛ր, ի՞նչ ես խնդըմ, էրեխեք են, հիրանց համար ճան են խաղըմ, ի՞նչ կա որ:

— Թաքավոր՛, — ասեց վազիրը, — ո՞նց թե ինչ կա, բա չե՞ս տենըմ՝ էսի էն տղեն ա:

— Ո՞ր տղեն:

— Է՛ն, որ մենք թողեցինք մեչի մեջ:

Թաքավորն ասեց.— Վազի՛ր, չի կարող պատահի:

Վազիրն ասավ.— Թաքավոր՛ն աբրած կենա, պատահե պրծեր ա, հո նոր չըպտի պատահի, հըլա տե՛ս անգաջի նշանը:

Թաքավորը վարավուրդ արավ, որ դրուստ՝ տղի աջ անգաջի ծերը կդրած ա:

— Վազի՛ր, — ասավ Թաքավորը, — ձիդ կըքչես էդ տղի հետևից, ուր գնա, մենք էլ նրա հետ:

Վազրի ճարն ինչ: Զիանքը տղի քամակից քչի՛ն, գացին դուզ պառավի տունը:

Վազիրը ձեն տվեց՝ տա՛նտեր, տա՛նտեր, պառավը դուս էկավ:

Ասին.— Մարե՛, էս քչեր մենք քո կոնախն ենք:

Պառավն ասավ.— Բալա՛ ջան, կոնախն Աստծունն ա, համա ես

մե աղքատ, պառավ կնիկ եմ, կարքին տուն-տեղ չունեմ, ձիանքին կեր չըկա:

Թաքավորն հանեց հինգ ոսկի տվեց պառավին, ասավ՝ գնա ձիանքին կե՛ր բե: Պառավը, որ ոսկիքը տեհավ, աչքերը չախմախին տվեց: Կոնախներին ներս տարավ, ձիանքին տեղավորեց, կեր տվեց, էկավ ներս: Պառավը քունջ ու պուճախը ման էկավ, ուտելու բան չըքտավ, գնաց մեքյա էծի կաթ բերեց դրեց Թաքավորի ու վազրի առաջ:

Թաքավոր ու էծի կաթ: Քթալը դես շուռ տվեց, դեն շուռ տվեց, ասավ. «Մարե՛, մենք սոված չենք, հացն հավաքի»: Պառավը տեհավ, որ կոնախները ամանչողներից չեն, հացն հավաքեց:

—Մարե՛, —ասեց Նադիր շահը, —դու մարթ ունե՞ս:

—Չէ՛, բալա՛ ջան, չունեմ, մարթա շուտ ա մեռե: Ունեմ-չունեմ մե տղա, մե հատ էլ էծ:

—Մարե՛, դե որ ըտենց ա, բեր քեզ հետ մե գործ բռնենք: Բեր էս քո տղին տո՛ւր մեզի: Տենըմ եմ, որ դու աղքատ, անճար կնիկ ես, տղեն էլ պստիկ ա, հէքուց-էլլօր վո՞վ գիդի՛ ինչ փորձանք գա գլխիդ, էս էրեխեն ի՞նչ պտի անի:

Պառավը մտքի տակ հընգավ:

Թաքավորը աչկի պոչով վարավուրդ արեց, որ պառավը էնքան էլ դեմ չի հընգընմ, ասավ. —Մարե՛, արի համաձայնվի՛, օխտ հարուր մանեթ էլ ոսկի փող կըտամ:

Պառավը քցեց-բռնեց, քցեց-բռնեց, հինքն հիրան ասավ. —Հերն էլ անիծած, քթնովի տղա յա, ընչի չեմ տա որ:

Թարսի պես հենց էդ վախտն էլ Թաքավորը ոսկիները հաշվեց, լցեց քուրսու վրեն:

Պառավը որ ոսկիները տեհավ, խելքը գլխիցը թռավ: Պառավն կանչեց ասավ տղին: Տղեն խելոք տղա էր: Որ հիմացավ՝ ինչը ընչից ա, ասավ. «Դու գիտես, ա՛յ մեր, դու որ քո համաձայնությունը տվեր ես, ես ինչ կանամ ասի»:

Էդ օրը քնան, հեքսի օրը՝ աքլորականչին, հելան նստան ձիանքը, տղին էլ վազիրը դրեց ձիան կաշը, քչին գացին: Մե խելաք որ գացին, Թաքավորն ասեց. «Վազի՛ր, տղին կըտանես մեչեն, մե խուլ տեղ, ձիանից կըհիչցնես, գլխի վրեն կըկախես, մե ոտը կըկապես մե ծառից, մեկէլը՝ մյուս ծառից, կըթողես կըգաս»:

Վազիրն ասավ. —Հրամանքդ, Թաքավո՛ր:

Տղին առավ Թարքը, քչեց գնաց դբա մեչեն:

Տարավ մե խուվաթ տեղ, էրկու ծառ իրար քիփ կպած-կայնած ին, էրեխի մե ոտը կապեց մե ծառից, մյուսը՝ մեկէլ ծառից, գլխի վրեն կախ տվեց:

Վազիրը որ էկավ, թաքավորն հարցրեց.— Հը՞, վազի՛ր, հրամանս կատարի՞ր:

Վազիրը՝ թե.— Բա ոնց, թաքավո՛ր, ես քանի գլխանի եմ, որ քո հրամանը չըկատարեմ:

— Հը՞, վազի՛ր, հիմի ի՞նչ կասես, տղեն ախչկաս առա՞ւ:

— Կառնի, թաքավո՛ր, կառնի, մի՛ վռազի:

— Տո քո բալեն չըմեռնի, էլ որդե՞ կառնի, որ դու քո ձեռով տա-
րար, վերջը տվիր:

— Կառնի, թաքավո՛ր, ես ասում եմ, կառնի:

— Լա՛ւ, թող առնի, որ ասըմ ես, թո քո ասածը հըլնի:

Բայց մենք խաբարը տանք էրեխուց: Էրեխեն հըլը գլխի վրա կախված ճոճըմ էր:

Դու բե, որ էդ կողմերում մե հայդնի ավչի կար: Էդ ավչին ամեն օր էթըմ էր մեչեն, մե լապստրակ, կաքավ խփըմ, բերըմ ընտանիք պահըմ:

Օրերից մե օր էդ ավչին թվանքն հուսին գեղից դուս էկավ, էթըմ էր դբա մեչեն: Մեկ էլ քոլի տակից մե լապաստրակ դուս էկավ, վազավ դբա մեչեն՝ ավչին էլ հետեից: Ավչին քյոնա էր, ասավ. «Կա-չըկա էսօր ես մե շահ ունեմ, որ ավը դբա մեչեն ա փախնըմ»: Ավչին մտավ մեչեն, դես շուռ էկավ, դեն շուռ էկավ, լապստրակին չըթթավ: Էն ա ուզըմ էր մեչից դուս գա, մեկ էլ մե ձեն հընկավ անգաջը: Անգաջ դրեց, որ ինչ. մե նվազ ձեն էր գալըմ: «Կա-չըկա, — ասավ, — ըստե մե բան կա»: Գնաց հառեջ, ինչ տե-
նա. էս ա մե էրեխա գլխի վրա ծառից կախ տված, մե ոտը կապած մե ծառին, մեկէլը՝ էն մեկէլ ծառին: «Այ, հայ, — ասավ, — էս ինչ անխիղճ, անաստված մարթ ես հելե»: Թվանքը դրեց ցած, գնաց էրեխու ոտի կապերը հարցրկեց, տեսավ, որ էրեխեն հագիվ անչոււմ էր, ջուր տվեց, ուշքի բերեց, քցեց ձիան թարքը, էլ որսի-մորսի չիչ-կաց: «Փա՛ռք քեզ, Աստվա՛ծ, — ասավ, — էրեխա չունեի. էս էլ իմ կսմաթը»:

Ավչին էրեխին բերեց տուն:

Կնիկը հարցրեց.— Այ մարթ, ասավ, էս ի՞նչ էրեխա ա:

Մարթը՝ թե.— Այ կնիկ, հալը-նաղըլը ըսենց, վերցա՛ էս էրե-
խին, քո շապկի յախից հնացրա՛, թող դառնա մեզի էրեխա:

Կնիկը մարթի ասածն արեց: Տղեն մնաց ավչու տանը, մեծա-
ցավ, շատ խելոք տղա դուս էկավ:

Թո տղեն ըսենց մնա ավչու տանը, մենք սալխը տանք Նադիր
շահից և Իզմիր վազրից:

Արթեն մոտ էր հայրենիք վերադառնալու ժամանակը, թաքա-
վորն էլ էր բեզարե, վազիրն էլ: Էլի շատ երգերնեք ման գալուց հե-

տո, Թաքավորն ու վազիրը վերջապես էկան Հասան էն գեղը, որ-
տեղ աբրըմ էր մեր ծանոթ ավչին:

Էստեղ Թաքավորն ասեց.—Վազի'ր, բեր ձիանքի գյամը բաց
թողենք, տենանք, թե ինչ թավր մարդի ուստ կըզանք:

Վազիրն ասավ.—Կամքը քոն ա, Թաքավոր:

Ձիանքը պտտան, էկան կայնան ավչու հայաթը:

Ձեն տվին՝ տաճտեր, տաճտեր, ավչին դուս էկավ, կայնավ Հա-
ռեչները:

—Ախպե'ր,—ասին,—կոնախ կընդունե՞ս:

Ասավ.—էդ էլ բան ա, որ ասըմ եք, իմ աչկի, իմ գլխի վրեն,
նե'րս համեցեք:

Հենց էդ վախտը մե 18-19 տարեկան թեթև տղա տնից հելավ
էկավ, ձիանքի գյամերից բռնեց տարավ գոմը:

Վազիրը չուն էր, էդ տղին իչկալու բաշտան ճանանչավ, տղեն
դուս էկավ, որ անգջի նշան էլ տեհավ, մատը կծեց, ասավ.—Թա-
քավոր, ճանանչա՞ր:

Թաքավորն ասեց՝ վի՛րը: Վազիրը մատով նշանց տվեց, ասավ՝
Փլանին:

Թաքավորն ասավ՝ չէ':

—Թաքավոր,—ասավ վազիրը,—ըխա', էսի էն տղեն ա:

—Ո՞ր տղեն, վազի'ր:

—Էն ծառից կապած տղեն:

—Ո՞նց թե ծառից կապած տղեն:

—Բա՛, ծառից կապած տղեն:

—Ախր, ո՞ր ծառից, վազի'ր, պա'րզ ասա, չեմ հասկընըմ:

—Թաքավորն աբրած կենա, մի՞տտ ա՝ մի 10-12 տարի առաջ,
որ պառավի տղին առանք...

Թաքավորը գլխի հընգավ վազրի ասածը, գույն տվեց, գույն
առավ, աչկով արավ, որ սուս մնա:

Ավչին կոնախներին տարավ ներս, հաց քցեց, կերան-խման,
հելան, որ քնեն, Թաքավորն ասեց.—Ավչի' ախպեր, արի քեզ հետ
մե առըտուր անենք:

—Ի՞նչ առըտուր, ես ի՞նչ ունեմ, որ ի՞նչ առըտուր անեմ:

—Ես էլ հենց էդ եմ ասըմ, տենըմ եմ, որ դու քյասիր մարթ ես,
արի ես քեզ 800 մանեթ փող տամ, դու քո էդ տղին տո'ւր ընձի:

Ավչին էս խոսքի վրա առնվավ, ասավ.—էդ ի՞նչ ես ասում,
ճամփո'րթ ախպեր, մարթ էլ հիրա ժառանգին ծախի՞:

—Ծախելը որն ա, ա'յ ախպեր, ես տենըմ եմ, որ դու անջաղ
ծերը ծերին ես հասցնըմ, օր ու դրիկ չունես, ես էլ հարուստ վա-

ճառական մարթ եմ, ոսկիւ շատ ա, բայց զավակ չունեմ, որ ընձնից հետո իմ հարստութեան տեր հըլնի:

Ավչին կնգա հետ խորհրդ արավ, քցեց բռնեց, քցեց բռնեց, ասավ.—Լա՛վ, դե որ շատ ես խնթրեմ, կըտամ:

Կանչեց տղին, ասավ. «Այ որթի, ես մե աղքատ մարթ եմ, քեզ մինչև հըմի պահե, մենձացըրեր եմ: Ըստուց ետը դու կանաս քո գլխի ճարը տենաս: Էս օրվանից դու կըգնաս էս մարթի հետ, հուր որ կըտանի, ինչ որ կասի, կըլսես»:

Տղեն խելոք, հնազանդ տղա էր, ասավ.—Դու գիդես, ա՛յ հեր, կամքը քոնն ա:

Էդ օրը քնան, հառավոտ՝ աղոթրանը ճողճղալու վախտը, վեր կացան, տղին էլ վերցրին հետները, հընգան ճամփա: Որ բավական հեռացան, թաքավորն ասավ. «Այ տղա, մե էս ձիան գյամից բռնի՛, ես հըմի էս սհաթին կըգամ»:

Թաքավորը ձիանից հիջավ, մեքյա դեն գնաց, ծոցից թուղթ ու մատիտ հանեց, գրեց. «Վաքի՛լ-վազի՛ր, էս գրաբեր տղեն հենց որ գա հասնի ձեր կուշտը, հառավոտ հասնի՛ հառավոտ, ճաշին հասնի՛ ճաշին, հիրիկունն հասնի՛ հիրիկունը, կըբռնեք կըքցեք փոփ մեջ, կէրեք»:

Նամակը դրեց փակետի մեջ, տվեց տղին, ասավ.—Այ տղա, մենք քեզ քո հորից ութ հարուր մանեթով առեր ենք, որ էս նամակը տանես տեղ հասցնես: Կըռնես էս ճամփեն, կէթաս Նադիր շահի պալատը, էս նամակը կըտաս շահի գլխավոր վազրին:

Ասելն ու վազրի հետ ձիանքի գլուխը շուռ տալը մեկ արին, քչին հեռացան:

Խեղճ տղեն մնաց մենակ: Նամակը դրեց ավչու կարած փոստե փափախի ծալը, ճամփա հընկավ:

Օրը մե տեղ իջևանելով՝ տղեն էկա՛վ հասավ Նադիր շահի թաքավորանիստ քաղաքը:

Հարցուփորցով հիմացավ, որ թաքավորի պալատը քաղաքի խաս բաղի մեջ ա: Տղեն գնաց գախտնի դռնով մտավ պարտեզը: Դեռ իչկաց, դեն իչկաց, տեհավ մե գեղեցիկ հավուզ: Գնաց նստավ էդ հավուզի կուշտը, հանեց ճամփի պաշարը, նհար արավ, ջուր խմավ, նեղացեր էր, պառկավ քնավ: Քնած վախտը փափախը գլխից հընգավ, որ հընգավ, թաքավորի տված նամակը էրևաց: Դարե, որ էդ վախտը շահի ախչիկը հիրա քառասուն նաթիչտների հետ պարտեզում ման էր գալըմ: Ման գալու վախտը ոնց հելավ նաթիչտներից մեկի աչկը առավ տղին, էկավ կայնավ տղի գլխին, նամակը փափախի մջից հանեց տվեց շահի ախչիկան: Շահի ախչիկը նամակը կարթաց, հառաչացավ դբա երիտասարդը, տեհավ, որ

էս տղեն հրեշտակի պեստ գեղեցիկ մե տղա յա. չուտես-չըխմես, թամաչ անես: Թաքավորի արհիկը էլ չըղիմացավ, հանեց հիրա արըշմե լայուղը, տղի ճակատի քրտինքը սրփեց, հոր գրած նամակը ճղեց, ընդրա բնյնով գրեց. «Վաքիլնե՛ր, վազիրնե՛ր, հենց որ էս գրաբեր տղեն կըհասնի, հառավոտ հըլնի՝ հառավոտ, կեսօրին հըլնի՝ կեսօրին, հիրիկուն հըլնի՝ հիրիկուն, հասնելու քիմին, էդ երիտասարդին կըփսակեք իմ արհիկա հետ»:

Նամակը ծալեց դրեց տղի փոստե փափախի ծալը, վերցեց հիրա նաժիչտներին, հեռացավ:

Քունն առնելուց հետո տղեն հելավ վեր, փափախը ծասկեց ու սալխով գնաց քթավ թաքավորի գլխավոր վազիրին: Գլխավոր վազիրը փորձված մարթ էր, նամակը տենալու քիմին, հասկացավ, թե ինչ ա գրած ընդա մեջը: Պալատականներին ժողովեց, կարթաց թաքավորի նամակը, կանչել տվեց շահի արհիկան, ասավ՝ կառնե՞ս էս տղին:

Ախիկին էլ հենց ըտան էր իշկըմ:

Ասավ.—Կառնեմ, ընչի չեմ առնի, մե արհիկ մե տղի պտի կսմաթ հըլնի, հալբաթ իմ կսմաթն էլ էդ ա:

Պալատականները շատ ուրախացան շահի արհիկա խելոք խոսքերի վրա: Հեքսի օրը սկսին հարսանիքը: Շահի արհիկան փսակին էս տղի հետ: Օխտ օր, օխտ քչեր հարսանիք արին: Ընեց հելավ, որ էրկու տարվա մեջ շահի արհիկը էրկու էրեխա բերեց, մեկը՝ արհիկ, մեկելը՝ տղա:

Էկավ շահի վերադառնալու վախտը. քսան տարին թմմեր էր: Շահն ու Իզմիր վազիրը ձիանքի գլուխները չըհին դբա տուն: Շատ էկան, թե քիչ, պատահան մե ճամփորթի:

Նաղիր շահն ասավ.—Վազի՛ր, մե նամա՛կ գրի, տո՛ւ էս մարթին, մե-էրկու էլ ոսկի՛ տու, թո խաբարը տանի պալատ, որ մենք ողջ-առողջ վերադառնում ենք:

Իզմիր վազիրը մե նամակ գրեց, էրկու հատ էլ ոսկի տվեց էդ մարթին, հղրկեց Նաղիր շահի պալատը:

Խաբարը որ էկավ հասավ պալատը, պալատականները՝ վաքիլ-վեզիր, խառնըվան հիրար:

Տղեն էր կանչեց կնգան, ասավ.—Այ կնիկ, հեսօր քո հերն ու Իզմիր վազիրը գալըմ են, էրեխեքին զարթրի՛, վերցա՛, էթանք դիմավորենք:

Քնան: Հեքսի օրը հելան վեր, դուխավոյ մուզիկով, թմբուկներով գացին թաքավորի հառաջ: Իզմիր վազիրը բինոկը դրեց աչկին, իշկա՛ց, իշկա՛ց, քթի տակ խնդաց: Թաքավորն ասավ. «Հը՞, Իզմիր վազիր, հիմի ընչես խնդը՞մ, հիմի էլ հո տղեն չըկա»:

—Թաքավո՛ր, —ասավ վազիրը, —ոնց չըկա, էն ա հընց էն տղեն ա, որ կա: էն տղեն ա, էն էլ քո ախչիկն ա, իսկ էն հըկու հըբխեքն էլ, որ վազիրները դրել են կուջաղներին, էն էլ քո թոռներն են:

—Վազի՛ր, —ասավ Թաքավորը, —դու հո չե՞ս ցնդե, ի՞նչ տղա, ի՞նչ ախչիկ, ի՞նչ թոռ:

—Թաքավո՛րն արբած կենա, չես հավատըմ, բինոկը ա՛ռ, հինքդ թամա՛չ արա:

Թաքավորն բինոկն առավ, դրեց աչկին, տեհավ. ի՞նչ տեհավ, որ դրուստ հեսա՝ մե տղա, մե օղլչուղ, հըկու հատ էլ հըբխա, նստած ֆայտոնի մեջը գալըմ են:

Թաքավորի ունեգ-ոռչտ խառնվավ, գույն տվեց, գույն առավ:

Վազիրն ասավ. —Հը՞, Թաքավոր, ի՞նչ կասես:

Թաքավորը կադղե, հընգնավոր էր. լուն որ ճակատից հընգներ, քառասուն կտոր կըլներ, էլ ինչ ասեր: Էկան հասան պալատ:

Թաքավորն հրամայեց, ասավ. —Նազիր, վազիր, վաքիր-մաքիր, հավաքվեք էկե՛ք:

Սաղ հավաքվան էկան, Թաքավորն ասավ՝ ջանաթներին էլ կանչե՛ք: Ջանաթներին էլ կանչեցին:

Թաքավորը վերցրեց ասավ. —Մե ասեք տենամ՝ էս վո՞վ ա իմ ախչկան տվե էս տղին:

Վաքիր-վազիրները զարմացած նային հիրար հերեսի:

Թաքավորը մեկ էլ հարցրեց:

Վաքիր-վազիրը՝ թե. —Թաքավո՛րն արբած կենա, դու ես տվե, վո՞վ ա տվե:

—Ոնց թե ե՞ս:

Ըստե մե խելոք մարթ մեջ հընկավ, գնաց դարագներից չահի հըրկած նամակն հանեց, բերեց տվեց հիրանը:

Շահը կարթա՛ց, կարթա՛ց, գլխը տարավ-բերեց, իչկաց Իզմիր վազիրն, իչկաց տղին, նոր էլ որդե... հելածն հելած էր:

Իզմիր վազիրն էր հելավ կայնավ Թաքավորի հառաջն, ասավ. —Հը՞, Թաքավո՛ր, հիմի իմ ասածն հելավ, թե՞ քո, բա որ ասու՞մ իմ էդ տղեն քո աղջկան կառնի՛:

Թաքավորն ամոթից գլխը կախե, էլ չէր հիմանու՞մ ինչ ասի:

Վազիրն էկավ հառեչ, ասավ. —Թաքավո՛ր, ըսկի մի՛ հոստտի, էսի ճակատի գիր էր, ըտենց էլ պըտի հըլներ՝ գրածը չի ջնջվի... Մի՞տղ ա, էն դավթար գրող մարթի ասածը...

Թաքավորը գլխը տարա՛վ-բերե՛ց, ասավ. —Բալի՛, Իզմիր՝ վազիր, քո ասածն ա՝ յազըլըն փոզոլմազ: